

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՀԵՍՎԱՑՈՒ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լուսինե Թումանյան

Հայ եկեղեցու միստիկ կամ խորհրդապաշտ գործիչներից է Գրիգոր վարդապետ Մարաշեցին (Հեսվացի): Նա ապրել և ստեղծագործել է XII դարում, ժամանակակից է եղել Ներսես Շնորհալուն: Գրիգոր վարդապետը եղել է Մարաշի մոտ գտնվող Հեսու (Հեսվաց) անապատի վանական: Մարաշեցին հիմնավոր և ընդգրկուն գիտելիքների շնորհիվ մեծ համբավ է վայելել, անգամ իր կենդանության օրոք հռչակվել է «իմաստասեր» և «անհաղթ գիտնական» պատվանուններով²: Գրիգոր վարդապետից մեզ հասած մատենագրական վաստակն առ այսօր անտիպ է: Դրանք կան Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք ձեռագրերում, ինչպես նաև հայկական այլ ձեռագրատներում (Վենետիկ, Վիեննա) պահվող մատյաններում:

Գրիգոր վրդ. Հեսվացուն նվիրված փոքրիկ ուսումնասիրություններ են հրատարակել Հ. Մելյանը³, Հ. Քյոսեյանը⁴: Քանի որ Գրիգոր վարդապետի երկերն ունեն խորհրդապաշտական բնույթ, ուստի հողվածում հարկ ենք համարել ներկայացնել նաև քրիստոնեական խորհրդապաշտական ուսմունքը: Նշենք, որ հայ խորհրդապաշտական մտքի մասին ուսումնասիրություն է հրատարակել Մեսրոպ վրդ. Պարսամյանը՝ ներկայացնելով Ներսես Շնորհալի հայրապետի խորհրդապաշտական ուսմունքը⁵:

Գրիգոր Մարաշեցու գրչին են պատկանում հետևյալ գործերը.

Ա. «Վայք ողբոց մեղուցեալ անձին խոստովանաբար ասացեալ առաջի Աստուծոյ Գրիգորի միայնաւոր ճգնաւորի Յեսուացոյ և անյաղթ գիտնականի յանդիմանութիւն հոգւոց եւ մտաց եւ մարմնոյ՝ ի զգու-

¹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3-րդ., աշխ.՝ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Երևան, 1991, էջ 403:

² Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 217:

³ Հ. Մելյան, Գրիգոր Մարաշեցին և նրա ստեղծագործությունները, «Էջմիածին» ամսագիր, 1960, հտ. 2, էջ 36-43:

⁴ Հ. Քյոսեյան, Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, Երևան, 2018:

⁵ Մ. վրդ. Պարսամյան, Լինել Աստուած, Ս. Էջմիածին, 2015:

շութիւն եւ յուղղութիւն սղալանաց, ի բղխումն արտասուաց և ի խայտառակութիւն մեղաց և ծուլութեան, որ էր ի թուիս ՇՂԸ (1149)»: Սա Գրիգոր վարդապետի ամենահայտնի և ամենից շատ ընդօրինակված գործն է: «Վայք ողբոց»-ը բովանդակող ձեռագրերից են Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), ձեռ. 108, ձեռ. 38, ձեռ. 1475, ձեռ. 2255, ձեռ. 2335, ձեռ. 2680, ձեռ. 8172, ձեռ. 8323, ձեռ. 724 և այլուր¹:

«Վայք ողբոց»-ի գրման շարժառիթ է հանդիսացել Իկոնիայի Մատուդ սուլթանի և նրա հրոսակախմբերի 1149 թ. արշավանքը Մարաշ քաղաքի վրա: Թշնամու գործած սարսափելի ավերածությունները ժողովրդին մեծ տառապանք և վիշտ են պատճառում: Ահա այս դառը դեպքերն էլ պատճառ են դառնում, որ Գրիգոր վարդապետը գրի «Վայք ողբոց»-ը: Սակայն, ինչպես բնորոշում է Ղևոնդ Ալիշանը, Գրիգոր Հեսվացին «փոխանակ զքաղաքն ողբալու՝ ինքն իր ներքին քաղաքը կողբայ»²:

- Բ. «Սկիզբն խոստովանութեան և յայտնութեան գաղտնեաց, պատմութիւն յանցանաց Գրիգորի Յեսուանց Մարաշոյ, ասացեալ մեղայի առաջի ծածկագիտին Աստուծոյ, որով զամենայն տեսանէ յառաջ քան զլինել նոցա»: Կա հետևյալ ձեռագրերում՝ ՄՄ 108, ձեռ. 2680, ձեռ. 7013, ձեռ. 8172 և այլուր: Բաղկացած է հետևյալ հատվածներից՝ «Խրատ անձին», «Խոստովանելով համառատ», «Եւ ապա զկնի խաբութեանն առանձին մեղք, որկորըստութիւն, որ է պատճառ ամենայն մեղաց», «Երկրորդ մեղք պոռնկութեան», «Խոստովանեցայց ըստ խորհրդոց ձանձրութեան», «Խոստովանեցայց զազահութեան և զարծաթսիրութեան, որ հաւասար է կռապաշտութեան», «Ի սկզբնահայր սկսայց մինչեւ ի սպառումն ծննդոց նորա կամայական յանձնառութեամբ հաստատեցի, եղի զիս պատրաստական ամենայն չարեաց», «Խոստովանեցայց վերստին դարձեալ աստանար զմնացեալ չարութեան բիծս», վերջում՝ Հեղինակի հիշատակարանը: Այս ստեղծագործությունը բովանդակում է հեղինակի մեղսաքավիչ խոստովանությունները, որոնք արտահայտված են «Մեղա»ների տեսքով: Ինչ-

¹ Գրիգոր Մարաշեցու երկերը բովանդակող ձեռագրերի մասին տես նաև Հ. Մելյան, նշվ. աշխ., էջ 37-39:

² Հ. Մելյան, նշվ. աշխ., էջ 36: Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 217-220:

պես հեղինակն է գրում՝ 1030 մեղաներ են:

- Գ. «Նորին Գրիգորի ասացեալ աղոթք, որ ի խորհրդեանն սուրբ և մեղսաքաւիչ Պատարագին մատուցանի Քրիստոսի Աստուծոյ մերոյ... Նորին հսկողի Առ նոյն աղերս մաղթանաց բանից խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ՝ օրհնութիւն, փառք Աստուծոյ - Անսկիզբն Աստուած անեղ, աներբ»: Այն բովանդակող ձեռագրերից է ՄՄ, ձեռ. 38: Աղոթքն ընթերցելիս զգալի է Նարեկացու ազդեցությունը: «Նարեկ» աղոթագրքի հետևությամբ, Մարաշեցին ևս իր աղոթքի տարբեր հատվածներ սկսել է «Նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանից ի խորոց սրտից խոսք ընդ Աստուծոյ» բնաբանով: Հետաքրքիր է նաև այն, որ այստեղ Գրիգոր վարդապետը մարդու կողմից Աստծուն ճանաչելու երկու՝ անճառելի (ապոֆատիկ) և ճառելի (կատաֆատիկ) ուղիների միջոցն էլ կիրառում է՝ օգտագործելով Աստծու էությունն ու բնությունը, գործերը բնութագրող տարբեր ստորոգելիներ.

«Անսկիզբն Աստուած,

Անեղ, աներբ, անժամանակ,

Անհաս, անքննին, անիմանալի, անճառ,

Ինքնագոյ, գոյացուցիչ, գերագոյ,

Յաւէտաշարժ, անշարժ, ինքնաշարժ շարժող, գերաշարժ,

Բարի աղբիւր բարութեան,

Անտես, անքննին, անձեւ, անորակ,

Անբաժ բաժանեալ, կեանք, կենդանարար, գերակենդան,

Անմահ, անմահարար, գերանմահ:

Կատարեալ, կատարիչ, գերակատար,

Լոյս, լուսաւորիչ, գերալոյս...»²:

- Դ. «Ողբ պիտանի վասն մեռելոց ի սիրելեաց ի վերայ ազգականաց ի Գրիգոր վարդապետէ»: Այն բովանդակող ձեռագրերից է ՄՄ ձեռ. 8065: Այստեղ հեղինակն անդրադառնում է այս աշխարհի սին և անցավոր լինելուն, ապա գովերգում այն մարդկանց, ովքեր ապրեցին Աստծու պատգամների համաձայն, ովքեր «թողին զխաւար կենցաղոյս ունայնութիւնն և հասին զվերին երանութեան, թողին զխաւար

¹ Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 358:

² Հ. Մելյան, նշվ. աշխ., էջ 42: ՄՄ, ձեռ. 38, 80ա:

կենցաղոյս, եւ առ արեգակն արդարութեան փութացան, թողին զաշխարհիս նսեմութիւն և լոյսն պայծառ վերացան...»¹:

Ե. «Աղոթք եւ պահք ընդ միմեանս լծեալ»: Իր բովանդակությամբ հարաբերվում է նախորդ երկին²: Առկա է հետևյալ ձեռագրերում՝ ՄՄ, ձեռ. 108, ձեռ. 640, ձեռ. 8172:

2. «Բան գովեստից պատմագրաբար Յաղագս ծննդեան եւ սննդեան եւ քաղաքաւարութեան եւ վասն փոխման ամենասրբուհոյ եւ փառավորեալ միշտ կուսին Մարիամու Աստուածածնին: Ասացեալ ի նորին ծառայէ եւ մաղթանաց հայցողէ, յոգնամեղ մենաւորէ Գրիգորի Յետուացոյ»: Աստվածածնին նվիրված ներբող է, այն բովանդակող ձեռագրերից է ՄՄ, ձեռ. 38:

Է. «Արդ, եթե կամիս խօսիմ մի անգամ ընդ քեզ սակաւ մի բանի» (կամ՝ «Ով անձն եւ միտք եւ սիրտ խօսիմ ընդ քեզ սակաւ մի...»): Կա հետևյալ ձեռագրերում՝ ՄՄ, ձեռ. 108, ձեռ. 601, ձեռ. 613:

Գրիգոր վրդ. Հեսվացին Հայ Եկեղեցու այն վարդապետներից է, ում ստեղծագործությունները գրված են միստիկ (խորհրդապաշտական) ոգով: Դրանք մեծ արժեք են ներկայացնում հայ վանական կյանքի, միստիկ ուսմունքի, ճգնակեցական կյանքի ուսումնասիրության համար: Հայ Եկեղեցու խորհրդապաշտական (միստիկ) միտքը զարգացել է հատկապես X դարում, Նարեկա վանքում՝ հանձինս վանահայր Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու: XII դարում արդեն Կիլիկյան Հայաստանում խորհրդապաշտական միտքը զարգացնում են Ներսես Շնորհալիին և Գրիգոր Հեսվացին: Ուստի և պարզ է, որ Գրիգոր վարդապետը պետք է կրեր Նարեկյան դպրոցի ազդեցությունը: Օրինակ՝ «Արդ, տո՛ւր խոցելոյս ի սիրտ եւ յոգի, աղաչեմ, գթած» (Նարեկ, Բան ԾԳ) և «Տուր մեզ սիրտ կակուղ եւ հոգի երկիւղի» (ՄՄ, ձեռ. 38, 69բ):

Քրիստոնեական խորհրդապաշտությունը մարդու սրբացման, աստվածացման, Աստծու հետ միավորման ձգտումն է: Մարդկային հոգին ոչ միայն ձգտում է ճանաչել Աստծուն, այլև միավորվել նրա հետ: Եկեղեցու սուրբ հայրերի համար մարդու սրբացումը՝ «աստվածացումը», ո՛չ գաղափար է, ո՛չ տեսություն, ո՛չ էլ դավանություն, այլ ամենից առաջ՝ ներքին

¹ Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 360: Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխատ.՝ Պ. Խաչատրյանի և Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 453-455:

² Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 361:

կեցություն՝: Քրիստոնյայի համար սրբացումը կամ աստվածացումը ոչ այլ ինչ է, քան գերագույն հաղորդակցում Աստվածային կատարյալ էությանը, որին նա հասնում է ոչ թե իր անհատականության ժխտումով, այլ իր անձը նմանեցնելով Աստվածային անձնավորությանը²: Աստվածացումը ոչ այնքան նյութական աշխարհի ժխտումն է, որքան այդ իրականության նկատմամբ մարդկային կրքերի հաղթահարումը: Այն կատարվում է կատարսիսի միջոցով՝ այն է աշխարհուրացումը, ինքնաժխտումը, սակայն սա չի նշանակում, որ քրիստոնեությունը մերժում է աշխարհը և մարմինը: Քրիստոնեության վարդապետության համաձայն՝ աշխարհը Աստծու թագավորության իրականացման միջավայրն է, մարդկային մարմինը Սուրբ Հոգու բնակատեղին է:

Արևելաքրիստոնեական խորհրդապաշտության մեջ առկա են երկու հիմնական ուղղություններ՝ վերացարկված-մտահայեցողական և բարոյագործնական: Երկու հոսանքներն էլ հետապնդում են մարդու աստվածացման նպատակը, բայց տարբեր կերպ են տեսնում այդ վիճակին հասնելու ուղիները: Վերացարկված-մտահայեցողական ազդեցությունը մարդու խորհրդապաշտությունը մարդու սրբացումը տեսնում է մտքի՝ պարզության վիճակի հասնելու մեջ, երբ միտքը, իմացականությունը (գնոսիս) լիովին մաքրված է այսրաշխարհային կյանքից: Մարդը պետք է մաքրի իր հոգին ու միտքը մեղքից, դարձնի այն պարզ և մաքուր: Այդ ժամանակ նրա վրա կերևա աստվածային պատկերը: Բարոյագործնական խորհրդապաշտության մեջ մարդու սրբացումն իրականանում է ոչ այնքան մտքի միջոցով, որքան սրտի խորունկ ապրումով, Աստծուն և Նրա արարչագործությունը սիրելու միջոցով (ագապե): Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Մարաշեցին (նաև Գրիգոր Նարեկացին) իրենց երկերում առավելաբար հարում են վերացարկված-մտահայեցողական ուղղությանը:

Մարդու աստվածացման ուղին անցնում է երեք հիմնական փուլերով՝ մաքրագործում (կատարսիս), լուսավորում կամ պայծառացում (ֆոտիսմոս), կատարելագործում (տելեոսիս)³: Մարդու գլխավոր կոչումն է հոգևոր

¹ **Ս. Минин**, Мистицизм и его природа, https://azbyka.ru/otechnik/Petr_Minin/mistitsizm-i-ego-priroda/. 17.09. 2019.

² «Աստվածացում» եզրը գործածված է համաքրիստոնեական խորհրդապաշտ հայրերի երկերում, հատկապես՝ ս. Գրիգորի Նազիանզացու. Митрополит Иларион Алфеев, Жизнь и учение св. Григория Богослова. <https://bit.ly/2YT6zIL>. 20.09. 2019.

³ **Ս. Минин**, Мистицизм и его природа, https://azbyka.ru/otechnik/Petr_Minin/mistitsizm-i-ego-priroda/. 17.09. 2019.

կյանքի այս երեք փուլերով մոտենալ Աստվածությանը:

Մաքրագործումը հոգևոր կյանքով ապրողների առաջին աստիճանն է: Մաքրությունը մտքի ձերբազատումն է զանազան մտածումներից, չար խորհուրդներից, ինչպես գրում է Մեսրոպ վարդապետն իր գրքում. «Մաքրությունը նաև մտքի ձերբազատումն է նրա մեջ բնավորված զանազան մտածումներից: Մտքի չար խորհուրդները պետք է բանտարկվեն սրտում և մահանան, որպեսզի չիրագործվեն և չծնեն հոգեկործան մեղքեր»¹: Մաքրությունն իրականանում է նաև զղջման, խոստովանության և ապաշխարության միջոցով:

Գրիգոր վարդապետը ողբում է այն բոլոր արատները, մեղքերը, որոնց կարող են տրվել միտքը, սիրտը, մարմինը, և տանել մարդուն դեպի կործանում: Ողբում է միտքը չար խորհուրդներ ունենալու և ապականվելու համար, բարի գործերից հեռանալու համար, ողբում է սիրտը պատվիրանները չկատարելու համար, ողբում է մարմինը (անձ) մեղքին տրվելու, չարին չդիմակայելու համար, անմաքուր և պիղծ ախտերի մեջ ընկնելու համար: Ողբում է իր անձը առաքինություններից զրկվելու և աստվածային պատվիրանները զանց առնելու պատճառով:

«Վա քեզ, անձն իմ, զի ոչ ներքին մարդդ յամենակատար յառաքինութիւն համեմեցեր, եւ ոչ պարսպեցար ճշմարտութեան պատուիրանաւք, եւ վասն անպատշաճութեան եւ անարժանութեան ոչ ես արժանի աչիցն Աստուծոյ, այլ լրբանաւք ասես՝ ընդէ՞ր դարձուցանես զերեսս քո յինէն...»²:

«Վա քեզ, միտք իմ, զի զամենայն ինչ զոր խորհիս դու, թէպէտ եւ ոչ զերծեսցես զնա, սակայն, տպաւք կնքեցաւ ի սրտի քում չարութիւն:

Վա քեզ, սիրտ իմ, զի յորժամ խնդութեամբ ընկալար զբան պատուիրանին, ընդէ՞ր ոչ ախոյեան եղեր ընդդէմ թշնամւոյն սատանայի, վառեալ զինաւքն Քրիստոսի, այլ հեղգութեամբ ետուր բանսարկուին քաղել զսերմն ի սրտէդ եւ եղեր անպտուղ բարոյն:

Վա քեզ, անձն իմ մեղաւոր, զի ոչ առեր զամենայն սպառազինութիւն հոգւոյն հակառակ ախտից մարմնոյ եւ ընդդէմ հոգւոյն չարութեան, զի անհնար է քեզ ընդունակ լինել աստուածային շնորհաց»³:

¹ Մ. վրդ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 118-119:

² ՄՄ, ձեռ. 108, 25ա: Մեջբերումներն անելիս պահպանել ենք բնագրի ուղղագրությունը:

³ ՄՄ, ձեռ. 108, 26բ-7ա:

Անձը մեղայական խոսքերով կամ «Վայ»-երով ողբալուց հետո վարդապետը կոչ է անում ապաշխարության, որպեսզի մեղանչողը իր սիրտը ջրի պես հեղի Աստծու առաջ և սկսի հերթով խոստովանել իր մեղքերը: Իսկ մեղանչելու ձևերը յոթն են.

«Առաջին են մարդ, երկրորդն՝ հոգի, երրորդն՝ միտք, չորրորդն՝ կամք, հինգերորդ՝ գիտություն, վեցերորդն՝ կամաւորութիւն, եփներորդն՝ գործականութիւն»¹:

Այնուհետ Մարաշեցին թվարկում է ամենավատ մեղքերի տեսակները՝ խաբեություն, պոռնկություն, ծանծրություն, ագահություն և արծաթասիրություն, չարին ծառայություն ևն: Վարդապետը թվարկում է մեղքերն ու դրանց բազմաթիվ տարատեսակները.

«Մեղայ պատուիրանազանցութեամբ, ամենայն մեղաց սխալմամբ, որ ինչ զամաւթ բերէ ի դէմս մարդոյ: Մեղայ բարէկենդանութեան ցանկալ: Մեղա փափկութեամբ: Մեղայ որկրամոլութեամբ: Մեղա շատ ուտելով եւ ըմպելով: Մեղա շուայտելով: Մեղա անգործ ուտելով: Մեղա արբեցութեամբ, որ է անամաւթութեան մայր: Մեղա երկեղիւ, որ է այլ արբեցութիւն: Մեղա զեխութեամբ եւ անսրբութեամբ...»²:

Այսպես թվարկում է 1030 մեղա, սակայն այս մեծ թվաքանակի թվարկման կողքին էլ նշում է, որ որոշները չգրեց՝ վախենալով, որ չլինի թե թեթևամիտները օգուտ քաղելու փոխարեն վնասվեն.

«Արդ, ամենայնիւ յամենայնի մեղայ, որ գրեցաւ եւ որ ոչ գրեցաւ: Նա ևս բազում էին, զոր ոչ գրեցի, վասն զի ոչ էին յիշած ի գիրքս, բայց միայն ի խոստովանութիւն: Եւ ես ոչ համարեցայ պատեհ կարգել աստ, վասն թեթեամտաց եւ տխմարաց, զի մի վնասեսցին առաւել, քան աւգտեսցին: Այլ զայս բաւականացուցի տունս Ռ. եւ Լ.»³:

Իսկ ի՞նչ օգուտ այս ապաշխարումից. մաքրության աստիճանում կատարվող ապաշխարությունը օգնում է կտրվել նյութականից, նյութական աշխարհի հետ կապված կրքերից, զղջալ նախկին գործերի համար և հորդառատ արցունքներով մաքրել սիրտն ու միտքը մեղքերից⁴: Գրիգոր վարդապետն ապաշխարության խորհրդի իմաստը մեկնաբանում է հետևյալ կերպ.

¹ ՄՄ, ձեռ. 108, 122բ-123ա:

² ՄՄ, ձեռ. 108, 123աբ:

³ ՄՄ, ձեռ. 108, 178բ:

⁴ Մ. վրդ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 122-123:

«Վասն զի ապաշխարութիւն իցէ Արքայութեան նախապատրաստիչ, ապաշխարութիւն անաւրէնութեան ջնջիչ, մեղաց արձակիչ, սպեացն սրբիչ: Ապաշխարութիւն փրկութեան մայր, բանսարկուին կորուստ, ցանկութեանց արտաքսումն: Ապաշխարութիւն ի սիրտս մարդոյ արմատացեալ եւ առժամայն յերկինս ի վեր թռուցանէ: Ապաշխարութիւն զկապանս մեղաց քակէ, զանյոյս ոգիսն կեցուցանէ, զխաւարեալս լուսաւորէ, զհեռացեալսն առ Աստուած ածէ, զմոլորեալսն դարձուցանէ: Ապաշխարութիւն ամենայն անյոյս հոգւոյ ապաստան յուսոյ, ապաշխարութիւն ամենայն մարմնական եւ հոգեկան ցաւոց դեղ իցէ»¹:

Մեղքերից մաքրված հոգին լուսավորվում է աստվածային շնորհներով, դառնում է աստվածային լույսն արտացոլողը: **Լուսավորման** փուլում մարդն իր մաքրված հոգին սկսում է կրթել պահքով ու աղոթքով. պահքով պնդացնում է հոգին, պայքարում մարմնականի դեմ, իսկ աղոթքն այն զրույցն է, որը մաքրված հոգին սկսում է Բարձրյալի հետ: Աղոթքը երկխոսություն է, հաղորդակցություն Աստծու հետ, սակայն միայն մաքրվելուց հետո է մարդը պատրաստ ճշմարիտ աղոթքի²:

Գրիգոր Հեսվացին, ինչպես նաև Ներսես Շնորհալին և այլ խորհրդրդապաշտներ, անդրադարձել է աղոթքին և պահքին՝ որպես կարևոր առաքինություններ, շնորհներ, աստվածության հետ հաղորդակցման միջոցներ:

«Աղաւթք եւ պահք լուծէ ընդդէմ դիւացն գնդի անյաղթելի: Աղաւթք եւ պահք բանսարկուին աւերումն: Աղաւթք եւ պահք շտեմարան բարեպաշտութեան: Աղաւթք եւ պահս հրեշտակաց միաւորութիւն: Աղաւթք եւ պահս զինաւորք ընդդէմ պատերազմացն անմարմինք: Աղաւթք եւ պահս երկնաքաղաքականութիւն, հրեշտակաց գործ: Պահք մեղաց սրբումն, պահք համարձակութիւն առ Աստուած, պահք մաքրումն սրտի: Պահք մեզ յԱստուծոյ պարգեւեալ է ամենայն բարութեանց գլուխս: Պահք սրբութիւն հոգոց, ողջութիւն մարմնոյ, երիտասարդաց հաստատութիւն, տղայոց պահապան, ծերոց սեպհականութիւն, կանանց զարդ եւ հաստատութիւն, ամենայն քրիստոնէից յոյս եւ մխիթարութիւն»³:

¹ ՄՄ, ձեռ. 108, 116բ-7ա:

² **Митрополит Иларион Алфеев**, Жизнь и учение св. Григория Богослова. гл. IV.2. Молитва и Боговидение.

³ ՄՄ, ձեռ. 108, 9բ-10ա:

Աստվածային շնորհներով լուսավորվելով, մարդը հոգեպես բարձրանում է մեկ այլ աստիճանի՝ **կատարելության**, երբ իր մարդկային բնության հնարավորությունների սահմաններում ճանաչում է անճանաչելի Աստծուն և միանում Նրան: Բանն Աստված մարդացավ, Իր աստվածային բնությանը միավորեց մարդկային կատարյալ բնություն՝ մարմին, հոգի և միտք. նշանակում է մարդն էլ պետք է աստվածանա՝ կատարյալ դառնա¹:

Սբ. Պատարագի խորհրդին նվիրված աղոթքում Գրիգոր վարդապետը հայացքը հայում է «մարդասէր եւ ողորմած, անոխակալ եւ անյիշաչար» Աստծուն և խնդրում, որ իր հավիտենական խորաններում ընդունի բոլոր նրանց, ովքեր քաջությամբ և արիությամբ մարտնչել են ճշմարտության հակառակորդների դեմ, սիրել են իրենց ընկերոջ անձը ինչպես իրենց անձը, և սիրել են Աստծուն իրենց ողջ սրտով և մտքով, գնացել են աստվածային պատվիրանների համաձայն, ովքեր մերժել են չարը և բարի ընթացք ունեցել, ովքեր ուղիղ դավանությամբ դավանել են Հիսուս Քրիստոսին, Հայր Աստծուն և Սուրբ Հոգուն²:

Մինչ ի կատարելություն հասածներն են այն անձինք, որոնց Քրիստոս՝ որպես Ահեղ դատավոր, պետք է արդարացնի և հաստատի իր օթեվաններում: Թևածում է Գրիգոր վարդապետի միտքը դեպի երկնային օթևանները և փորձում պատկերացնել այն բերկրալի պահը, երբ Քրիստոսի հետքերով գնացած անձինք, հանուն նրա տառապածներն ու հալածվածները, իրենց արյունը հեղածները պիտի հանդիպեն Քրիստոսին:

«Արդ, ո՞վ իցեն նոքա, որ այսպիսիքս են, զի եւ մեք նախանձաւորք լիցուք նոցա, որ յաւուրն յայնմիկ ահաւորի եւ ի ժամուն զարհուրելի դատաստանին մտցեն ողջունեալ եւ համարձակեալ եւ աներկիւղ իբրեւ առ Հայր իւրեանց եւ քաջ սիրելի Քրիստոսի: Ծանի՛ր զայս քննութեամբ եւ ի մի՛տ առ, զի իբրեւ զորդիս եւ զսիրելիս ընդունի զնոսա, որք հաւաւորով եւ յուսով կացեալ են ի պատուիրանս նորա:

Արդ, ո՞վ են երանելիքն, զի յորժամ Քրիստոս նստեալ կա յաթոռ դատաստանի, մտանեն առաջի Նորա, եւ Նա վաղվաղակի յառնէ ընդառաջ նոցա, ողջունէ եւ ընդունի զնոսա զուարթ երեսաւք եւ ժպտեալ ակնար-

¹ Митрополит Иларион Алфеев, Жизнь и учение св. Григория Богослова. гл. IV.3. Обожение.

² ՄՄ, ձեռ. 38, էջ 79ա:

կութեամբ եւ ամենայն ուրախալի անունադրութեամբ, եւ բարեգութ համարձակութեամբ գգուէ զնոսա եւ վերարկէ իբրեւ ի հեռաւորութենէ եկեալ սիրելի եղբայր կամ որդի, համբուրէ զնոսա եւ ասէ. Բարի եկիք, սիրելիք իմ»¹:

Քրիստոնյայի համար աստվածացումը գերագույն հաղորդակցում է Աստվածային կատարյալ էությանը, որին նա հասնում է իր անձը փոխելով, նմանեցնելով Աստվածային անձնավորությանը, ինչպես իր գրքում նշում է Մեսրոպ վրդ. Պարսամյանը՝ «Լուսավորությունը ճանապարհ է հարթում Աստծո հետ անձնական հարաբերության համար, որը գտնվում է քրիստոնեական հոգևոր կյանքի բարձունքին: ...Աստվածացումը նաև քրիստոնեական Եկեղեցու ողջ «խորհրդականության» նպատակն է, քրիստոնյայի բարոյական և ճգնակեցական սխրանքի բարձրակետը, մարդու այլակերպությունն ու կատարելությունը, այն տիրավանդ պատվիրանն է. «Արդ՝ եղերո՛ւք դուք կատարեալք, որպէս եւ հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Մատթ. Ե. 28)»²:

Այսպիսով, Գրիգոր վարդապետ Հեսվացին (Մարաշեցի) Հայ Առաքելական Եկեղեցու խորհրդապաշտական ուսմունքի կրողներից մեկն է, ումից մեզ հասած մատենագրական ժառանգությունը առանցքային է խորհրդապաշտական աստվածաբանության ուսումնասիրության համար:

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՀԵՍՎԱՑՈՒ

ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏԱԿԱՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լուսինե Թումանյան

Քանալի բառեր՝ Գրիգոր Հեսվացի, Հեսվաց անապատ, Մարաշ, խորհրդապաշտական, վանական կյանք, ողբ

Գրիգոր Հեսվացին (Մարաշեցի) ապրել է XII դարում: Գրիգոր վարդապետը եղել է Մարաշի մոտ գտնվող Հեսվաց անապատի վանական: Դեռևս իր կենդանության օրոք հռչակվել է իր մեծ գիտելիքների շնորհիվ, նրան կոչել են «Իմաստասեր», «անհաղթ գիտնական» և այլ պատվանուններով: Գրիգոր Հեսվացուց մեզ հասել է որոշակի մատենագրական վաստակ, որը առ այսօր անտիպ է: Դրանք առկա են Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք ձեռագրերում,

¹ ՄՄ, ձեռ. 108, 20բ:

² Մ. վրդ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 138:

ինչպես նաև հայկական այլ ձեռագրատներում (Վենետիկ, Վիեննա) պահվող մատյաններում:

Գրիգոր վրդ. Հեսվացին Հայ Եկեղեցու այն վարդապետներից է, ով միստիկ (խորհրդապաշտական) ոգով գրված գործեր է թողել: Դրանք մեծ արժեք են ներկայացնում հայ վանական կյանքի, միստիկ ուսմունքի, ճգնակեցական կյանքի ուսումնասիրության համար: Գրիգոր Հեսվացու գրչին պատկանող ամենահայտնի գործերն են՝ «Վայք ողբոց մեղուցեալ անձին խոստովանաբար ասացեալ առաջի Աստուծոյ», «Սկիզբն խոստովանութեան և յայտնութեան գաղտնեաց, պատմութիւն յանցանաց Գրիգորի Յեսուանց Մարաշոյ»:

МИСТИЧЕСКИЕ ПРОИЗВЕДЕНИЯ ГРИГОРА ИСВАЦИ

Лусине Туманян

Ключевые слова Григор Исваци, скит Исайи, Мараш, мистицизм, монашеская жизнь, аскетический образ жизни, плач.

Григор Исваци (Марашеци) жил в XII в. Григор вардапет был монахом в ските Исайи, расположенного близ города Мараш. Еще при жизни он был известен в силу своих глубоких знаний и назывался престижными когноменами: «философ», «непобедимый ученый». До нас дошло несколько до сих пор неопубликованных произведений Григора Исваци. Они находятся в собраниях рукописей Матенадарана им. Маштоца, равно как и в нескольких других депозитариях армянских рукописей (Венеция, Виена).

Григор вардапет был одним из учителей Армянской Церкви, писавший свои творения в мистическом жанре. Они представляют большую ценность для изучения армянской монашеской жизни, аскетического образа жизни и мистицизма. Самые известные произведения, принадлежащие перу Григора Исваци суть следующие: "Скорбный плач грешника, обращенный к Богу" и "Начало исповеди, откровение тайн и история грехов Григора Исваци".

MYSTICAL WORKS OF THE VARDAPET GRIGOR HESVATSI

Lusine Tumanyan

Key words - *Grigor Hesnatsi, cloister of Isaiah, Marash, mysticism, monastic life, ascetic lifestyle, lamentation.*

Grigor Hesnatsi (Marashetsi) lived in the XIIIth century. Grigor vardapet was a monk in the cloister of Isaiah, situated near the city of Marash. Even during his lifetime Grigor became famous for his great knowledge and he was called by prestigious names as a "Philosopher", an "Invincible scholar." Some works of Grigor Hesnatsi have had reached us, which remain still unpublished. They are preserved in a several manuscript collections: in the Mashtot's Matenadaran, as well as in the other depositories (Venice, Vienna).

Grigor Hesnatsi was one of the vardapets (doctors) of the Armenian Church, who left some mystical works. These writings are very valuable for the study of Armenian monastic life, ascetic lifestyle and mysticism. The most known works by Grigor Hesnatsi are "The lamentations of the sinful person confidently addressed to God" and "The beginning of the confession and the unveiling of secrets and the history of the sins of Grigor Hesnatsi".